ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի N 954-Լ ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

հ/հ	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Թաթուլ Ստեփանյան 26.02.2024 09:33:31	Կրկին անգամ չեք անրադառնում որոշման ընդունման տնտեսական բաղադրիչին, այսինքն՝ սույն որոշման ընդունման պարագայում ինչպիսի տնտեսական արդյունքներ եք ակնկալում: Ակնհայտ է, որ սա ամենամյա մեծածավալ ներդրումներ է ենթադրում, ինչպես, որ ներկայացրել եք՝ պետական բյուջեից: Չկան արդյո՞ք խոշոր և մանր եղջերավոր գյուղատնտեսական կենդանիների տեղաշարժը հսկելու,	Ձեր կողմից արված առաջարկությունը ընդունվել է ի գիտություն: Նախագիծը ներկայացվել է շահագրգիռներին՝ քննարկման: Հաջորդիվ, անհրաժեշտության դեպքում, նախագիծը կլրամշակվի:	

		հետագծելիությունն ապահովելու և կամ հիվանդություններն արդյունավետ կառավարելու ալտերերնատիվ այլ կոնցեպտներ, եթե կան, ապա, ո՞րն է այս առաջարկի առավելությունները, իսկ եթե չկան և սա միակն է, ապա առաջարկում եմ ներկայացնեք տեքստում:		
2	Թաթուլ Ստեփանյան 26.02.2024 09:24:58	2020 թվականի ընդունված նույն խնդրին առընչվող ծրագրում ներկայացված էին այսպիսի ցուցանիշներ՝ <<2020-2023 թվականների ընթացքում պետական պատվերի հաշվին կհամարակալվի և կհաշվառվի հանրապետությունում առկա ավելի քան 1.5 մլն գլուխ ԽԵԿ, այդ թվում՝ մեկնարկային տարում 800 հազար գլուխ, իսկ հաջորդիվ շուրջ 245 հազար գլուխ տարեկան>>, խնդրում եմ մի քանի պարբերությամբ ներկայացնել, թե ինչպիսին է պատկերը սույն որոշման մեկնարկում:	Ծրագրի մեկնարկը տրվել է 2022 թվականի նոյեմբերի 15-ին և առ 2024 թվականի հունվարի 1-ը համարակալվել և հաշվառվել է շուրջ 590 000 գլուխ խոշոր եղջերավոր կենդանի:	